

## 8.

Սարգիս Ռոտոսթոյի մէջ կը բանտարկուի. Չմիւռնիա կը տարուի, ասկէ քիտս, ուր կը թողուի տարի մը: Ազատութեան հրովարտակը կ'ելլէ, Սարգիս Եւզոկիոյ Առաջնորդ կ'անուանուի: Սարգիս Պոլիս կ'երթայ կը հաստատուի: Սարգիս Վ. Թէրքրտաղցի, Սահակ Երէց, Ախլցիայի կաթողիկեայք եւ իրենց կենսագրութիւնը: Սարգիս Եպ. Խարանեան, Ստեփանոս Արքեպ. Գունտի, կաթողիկեայք:

2-րդ զՍարգիս բանտարկելով, առանձին նաւ մը պատրաստել տուաւ: Սարգիս թէպէտ շատ վշտացած էր այս անիրաւ նեղութեանց համար, սակայն ներելով իր թշնամիներուն, ինք զինք ուրախ կը բռնէր: 2-րդ փութաց զՍարգիս նաւ դնել: Սարգսի սիրով ընկերացաւ նաեւ իր ձեռնասուն աշակերտը Պետրոս քահանայն: Հասան ի Պողազ Հիսար. ուր 2-րդ զՍարգիս բանտ դնելով՝ սպասեց որ նաւ մը գայ զիրենք Վիպրոս տանելու: Հոն Հայերն իրենց երիցուն հետ այց ելան իրեն եւ մխիթարեցին զինքը: 2-րդ տեսնելով որ Վիպրոս երթալու նաւ չի գտնուիր, Չմիւռնիա գացող նաւ մը գտաւ եւ հոն փոխադրեց զՍարգիս, յուսալով որ անկէ կրնայ դիւրաւ Վիպրոս անցնիլ: Չմիւռնիա նորէն բանտարկուեցաւ Սարգիս, ուր իրեն այցելեցին տեղւոյն ազգայինք եւ զինք մխիթարեցին: Այն ատեն տեղւոյն Առաջնորդն էր Աբրահամ Վ. Աստապատցի, որ թէպէտ քաղկեդոնականաց հակառակ էր, բայց Սարգսին բարեկամն էր եւ կը ցաւակցէր իրեն: Հոն էր նաեւ ուղղափառ Հ. Մկրտիչ Վ., աշակերտ Մխիթարայ Աբրահամի, ճարպիկ եւ ժիր անձ մը, որ հնարք կը